ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ
ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ*

Պատմ. գիտ. դոկտոր. Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ

1. ՖԵՈԴԱԼԻԶՄԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մ. թ. III—IV դարերը համաշխարհային պատմության մեջ եղան խոշորագույն հասարակական տեղաշարժերի ժամանակաշրջան։ Առաջավոր Ասիայի ու Միջերկրածովյան երկրները հին ստրկատիրական հասարակարգից անցում են կատարում դեպի նոր, ավելի առաջավոր, ֆեոդալական հասարակարգը։ Ճիշտ է, վերջինիս բոլոր դրսևորումները չեն, որ անմիջականորեն հանգեցնում են հասարակության առաջընթացին։ Վաղ ֆեոդալիզմը իր հետ բերում է երկրների ու ժողովուրդների միջև կապերի ժամանակավոր թուլացում, տնտեսական ու մշակութային որոշ կղզիացում, քաղաքային կյանքի տեղատվություն և այլն, բայց այդ նահանջը հետագայում փոխարինվում է նոր ծաղկումով, մարդկության նորանոր նվաճումներով։

Հայաստանը բացառություն չէր կազմում դեպի ֆեոդալիզմ գնացող երկրների մեջ և նույնիսկ ընթանում էր նրանց առաջին շարքերում. ֆեոդալականացման պրոցեսները այստեղ ավելի վաղ են սկսվում և առավել արագ ընթանում, քան այն հասարակություններում, որտեղ խոր արմատներ ձգած դասական ստրկատիրական հասարակարգը մեծ դժվարությամբ էր տեղի տալիս։

Սոր դարաշրջանի մուտքը հայտանշվում է երկու նոր դասակարգերի առաջացմամբ՝ ֆեոդալ-հողատերերի և ֆեոդալական կախման մեջ գտնվող գյուղացիության։

Շահագործվող այս նոր դասակարգի առաջացումը երկու հանդիպակաց սոցիալ-տնտեսական պրոցեսների հետևանք էր։ Ազատ գյուղական համայնականները կամ շինականները, գեղջուկները, որոնց պարտականությունն էր սոսկ հարկեր տալ պետությանը և պարհակներ կատարել, այժմ ընկնում են լրացուցիչ շահագործման տակ՝ սկսում են վճարել իրենց հողերին տիրացած ֆեոդալներին արդյունքի մի մասը և կատարել նրանց համար պարտադիր աշխատանքներ՝ հողի օգտագործման իրավունքի դիմաց։ Շահագործման այս սաստկացումը տարբեր ձևեր էր ընդունում, հասցնելով որոշ դեպքերում ընդհուպ մինչև շինականության ամրակցումը հողին, մինչև ճորտությունը։

Մյուս կողմից փոխվում է և մասնատիրական տնտեսությունների՝ ադարակ-դաստակերտների մշակների շահագործման բնույթը։ Ստրկական տիպի

---

* *Այս հոդվածը հանդիսանում է հրատարակության պատրաստվող «Հայ ժողովրդի պատմության համառոտ ուրվագիծ» հատորի գլուխներից մեկը.— խմբ.։*

շահագործումը, իրեն հատուկ ցածր արտադրողականությամբ, արդեն չի բավարարում նոր պայմաններին։ Մշակները հետզհետե ձեռք են բերում որոշ ինքնուրույնություն ու իրավունքներ, որոնք տանում են դեպի նրանց հավասարեցումը շինականներին։ Դաստակերտ-ագարակները աստիճանաբար ավելի են նմանվում գյուղերի։

Ֆեոդալական շահագործող դասակարգը ևս, ինչպես ասվեց, իր արմատներն ուներ նախորդ հասարակության ընդերքում։ Հելլենիստական ժամանակաշրջանում պետության տարածքի մեծ մասը զբաղեցնում էին արքունի հողերը։ Հետագայում արքունի հողային ֆոնդը սկսում է քայքայվել։ Վարչական ստորաբաժանումների վրա կարգված արքունի կառավարիչները՝ ստրատեգոսները կամ նախարարները, հետզհետե հորից որդի ժառանգական են դարձնում իրենց պաշտոնները, որով նրանց իրավունքները համապատասխան երկրամասերի վրա հետզհետե վերածվում են ֆեոդալական սեփականության իրավունքի, իսկ իրենք նախարարները՝ իսկական ֆեոդալ-իշխանների։ IV դարում այս պրոցեսները շատ առաջադիմած են արդեն, ուրեմն նրանց սկզբնավորումն ու զարգացումը վերագրելի են նախորդ II—III դարերին։ Պետության տարածքի մեծ մասը արդեն պատկանում է մի քանի տասնյակ նախարարական տոհմերի և եկեղեցուն, որը նույնպես մի խոշորագույն ֆեոդալ էր։

Երկրի կյանքի այլևայլ բնագավառները ղեկավարող արքունի գործակալությունները ևս դառնում են այս կամ այն հզոր նախարարական տոհմի ժառանգական մենաշնորհ։ Այսպես, սպարապետությունը վերապահվում է Մամիկոնյան տոհմին, հազարապետությունը՝ Գնունիներին և Ամատունիներին, թագակապ ասպետությունը՝ Բագրատունիներին, մաղխազությունը՝ Խոռխոռունիներին և այլն, ըստ որում անգամ այդ տոհմերն իսկ հաճախ անվանվում են ըստ իրենց սեփականած պաշտոնի՝ «Ասպետունի», «Մաղխազունի», «Մարզպետական» և այլն։

Նախարարական տոհմերը գրանցվում են հատուկ պաշտոնական վավերագրում՝ «Գահնամակում», որոշակի կարգով, ըստ իրենց կարողության ու նշանակության։ Առաջին շուրջ մեկ տասնյակ նախարարությունները համարվում են ավագ, մյուսները՝ կրտսեր, այդ հերթականությամբ էլ բաղմում են արքունիքում։ Մրցություն ու պայքար է ծավալվում ավելի բարձր գահի համար։

Ստեղծված ֆեոդալական իշխանությունները՝ նախարարությունները, զարգացման ընթացքում գնալով ավելի են նմանվում առանձին պետական միավորների։ Իր տիրույթների տարածքում, իր «աշխարհում» ֆեոդալը, որ սովորաբար տանուտեր կամ պարզապես տեր էր կոչվում, ուներ թագավորի իշխանությունը հիշեցնող անսահմանափակ իշխանություն՝ և՛ վարչական, և՛ ռազմական, և՛ դատական։ Ուներ իր ստորադրյալ վասալ-հողատերերը, մասամբ իր ազգականներից և մասամբ այլ տոհմերից, որոնցից ավագները իր նման կոչվում էին իշխան ու նախարար, իսկ կրտսերները՝ սեպուհ և ազատ։ Նրա ռազմական ուժերը, ըստ կարողության, հասնում էին հարյուր զինվորից մինչև բյուրի (տասը հազարի), և ֆեոդալները այդպես էլ անվանվում էին՝ «հարյուրավորներ», «հազարավորներ» և կամ «բյուրավորներ»։ Այս զորքը պատերազմի էր ելնում իր իշխանի հրամանատարության և դրոշի ներքո։

Մեծ Հայքի արքան ու նրա գլխավորած կենտրոնական իշխանությունը, այսպիսով, այժմ գործ ուներ ոչ թե ռազմա-ստրկատիրական ավագանու՝ արքայից մեծապես կախված ու նրան հլու-հպատակ ներկայացուցիչների հետ,

այլ ինքնիշխան նախարարների, որոնք կենտրոնական այդ իշխանության գոյությունը շատ էլ անհրաժեշտ ու ցանկալի չէին համարում, գտնելով, որ իրենք ի վիճակի են իրականացնել նրա ֆունկցիաները։ Այսպիսի գիտակցությունը անընդհատ ապստամբություններ ու նույնիսկ քաղաքացիական պատերազմներ էր ծնում նախարարությունների և կենտրոնական իշխանության միջև։ Սակայն Հայաստանը այն պետություններից չէր, ուր նման պայքարը մնար երկրի զուտ ներքին դործ։ Պարսկասեր և բյուզանդասեր նախարարությունները չէին վարանում դիմելու համապատասխան երկրի ռազմական օգնությանը իրենց թշնամու դեմ։ Հատկապես վտանգավոր էին պարսկասեր թևի նախարարությունների գործողությունները, քանի որ Պարսկաստանի քաղաքականությունը ուղղված էր հայկական կենտրոնացված պետության քայքայմանը, մինչդեռ Հռոմը ինչ-որ չափով շահագրգռված էր այդ պետության պահպանմամբ, որպես պատվարի իր գլխավոր ախոյանի՝ Պարսկաստանի դեմ։

Հայոց թագավորների իշխանության ներքին նեցուկ էին մնում այն մի շարք նախարարությունները, որոնց համար այս կամ այն պատճառով անջատողական քաղաքականությունը ձեռնտու չէր, ապա և քաղաքները, որոնք խորթ էին մնում հասարակությանը համակած ֆեոդալականացմանը, և արքունի բանակը, որը թեև չուներ նախկին տեսակարար կշիռը, բայց այնուամենայնիվ դեռ պահպանում էր իր գերակշռող դիրքը նախարարական զորքերի նկատմամբ։

Հենվելով ահա այս ուժերի վրա, Արշակունիները մերթ սիրաշահման (հողային նվիրատվություններ, պաշտոնների շնորհում), մերթ ահաբեկման (նախարարական հողերի բռնագրավում, տոհմերի պատժում, ընդհուպ մինչև ֆիզիկական բնաջնջումը) միջոցներով ջանում էին սանձահարել պառակտիչ, կենտրոնախույս տարրերը, ապահովել միասնական կենտրոնացված պետության գոյությունը։ Եվ այդ նրանց բավական երկար ժամանակ հաջողվում էր, շնորհիվ, մանավանդ ևս մեկ գործոնի՝ ժողովրդի լայն օժանդակությանը այն օրհասական պահերին, երբ կենտրոնական պետությունը հանդես էր գալիս որպես օտար բռնակալությունից երկրի ու ժողովրդի պաշտպանության կազմակերպիչ։

Այս բոլորով հանդերձ, սակայն, Արշակունյաց պետությունը խոր ճգնաժամի մեջ էր և հին հայկական պետականությունը իր գոյության եզրափակիչ փուլն էր ապրում։ Լինելով նախորդ հասարակության ծնունդ, այն ինչ-որ չափով հարմարվում էր նոր հասարակության պայմաններին, կրում որոշ ձևափոխություններ, բայց այդ ուղին անվերջ շարունակվել չէր կարող. հակասությունները դառնում են անհաղթահարելի, և հայկական ինքնուրույն պետությունը, տեղի տալով Հռոմի և Պարսկաստանի քայքայիչ միջամտություններ առջև, իր աստիճանական վախճանն է գտնում IV դարի վերջերին և V դարի առաջին տասնամյակների ընթացքում։ Սրան հետևում է գրեթե հինգհարյուրամյա պետականազուրկ շրջան։

Նոր, ֆեոդալական հասարակարգի զարգացումը իր սկզբնական փուլերում սպառնում էր նաև քաղաքների բարեկեցությանը և նույնիսկ գոյությանը։ Քաղաքային կյանքը Հայաստանում տակավին աշխույժ էր մ. թ. IV դարի առաջին կեսում։ Բարգավաճ վիճակում էին և պահպանում էին իրենց նշանակությունն ու արտոնությունները հնադարյան այնպիսի քաղաքներ, ինչպես Ար-

տաշատը, Երվանդաշատը, Վաղարշապատը, Զարեհավանը, Զարիշատը, Տիգրանակերտը, Վանը։ Սակայն տնտեսական կողմիացումը, առևտրական կապերի թուլացումը, քաղաքների մշտական հովանավոր՝ կենտրոնացված պետության քայքայումը մահացու էին հին քաղաքների համար։

Հայաստանի քաղաքային կյանքին ծանրագույն հարված հասցրին IV դարի 50—60-ական թթ. հայ-պարսկական պատերազմները, որոնց ընթացքում, դարձյալ ոչ առանց հայ նախարարության ներկայացուցիչների օժանդակության, կործանվեցին ու ավերվեցին Հայաստանի բոլոր խոշոր քաղաքները, նրանց բնակչության մեծ մասն էլ գերեվարվեց Պարսկաստան։ Նման մի հարված հնում կհանգեցներ երկրում քաղաքային կյանքի ժամանակավոր նվազման։ Իսկ այժմ, վաղ ֆեոդալիզմի պայմաններում, այն ունեցավ արդեն բախտորոշ նշանակություն. հին հայկական քաղաքներն ընդմիշտ դադարեցին գոյություն ունենալուց։ Նրանց տեղերում առաջացան գյուղեր, ավաններ։ Միակ բացառությունը Դվինն էր, որի բարգավաճումը կապված էր նրա՝ տարանցիկ առևտրի հանգույց և պարսկական ու արաբական վարչական կենտրոն լինելու հանգամանքների հետ։ Քաղաքային կյանքը Հայաստանում վերածընվեց միայն կես հազարամյակ անց։

Վաղ ֆեոդալիզմի պայմաններում հին հայկական պետության և քաղաքների նման իր անկումն է ապրում նաև հին հայ, հելլենիզմի ազդեցություն կրած մշակույթը, մասնավորապես՝ նրա կարևոր հատվածը կազմող հեթանոսական կրոնը, որը նույն IV դարի սկզբներին, դարձյալ դիմադրությունից ու պայքարից հետո, իր տեղն է զիջում նոր հասարակությանը ավելի համապատասխանող դաղափարախոսությանը՝ քրիստոնեությանը։

2. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ

Տրդատ Մեծի թագավորության ժամանակաշրջանի (298—330 թթ.) խոշորագույն իրադարձությունը քրիստոնեության ընդունումը և հռչակումն է Հայաստանում որպես պաշտոնական պետական կրոն։

Ծայր առնելով մ. թ. I դարում, քրիստոնեությունը II և III դարերի ընթացքում լայն տարածում գտավ Հռոմեական կայսրության մեջ և Արևելքում, որպես կեղեքվող ու զրկված ժողովրդի դաղափարախոսություն, որը կենսական արհավիրքների ու զրկանքների դիմաց հատուցում ու երջանկություն էր խոստանում հանդերձյալ կյանքում։ Դրեթե բոլոր պետությունները, ուր տարածում էր գտնում նոր վարդապետությունը, թշնամաբար էին վերաբերվում նրա հետևորդներին, հալածում էին նրանց, ջանում ճնշել ամենադաժան միջոցներով։ Շարժումը, սակայն, կենսունակ էր և նրա դաժանաբար հոշոտված ներկայացուցիչների վախճանն իսկ, զովերգվելով, սնում և զարկ էր տալիս նրա տարածմանն ու խորացմանը։

Ժամանակի ընթացքում, սակայն, քրիստոնեությունը փոխում է իր դասակարգային բնույթը, ստեղծելով ի դեմս հոգևորական նվիրապետական սանդուղքի մի կազմակերպություն, որը հեշտությամբ կարող էր մերվել ֆեոդալականացող հասարակությանը, ի սպաս դնելով իր ուսմունքը իշխող դասակարգին, որպես շահագործվող զանգվածների զսպման մի նրբին ու կատարյալ

միջոց։ Ըմբռնելով այս ճշմարտությունը, պետությունները մեկը մյուսի ետևից փոխում են իրենց վերաբերմունքը քրիստոնեության նկատմամբ, զինվում նրանով, դարձնում այն պաշտոնական կրոն։

Այստեղ ևս, ինչպես ֆեոդալական հասարակության զարգացման խնդրում, Հայաստանը առաջին շարքերում էր, որ մեծ չափով պայմանավորված էր անցած դարերի ընթացքում նրա հաղորդակցմամբ հելլենիստական մշակույթին ու գաղափարախոսություններին։

Քրիստոնեությունը արդեն II—III դարերում Հայաստան էր ներթափանցում հարավից՝ Ասորիքից և արևմուտքից՝ Կապադովկիայից ու Փոքր Հայքից։ Այս երկրներից քրիստոնեական քարոզիչները մտնում էին Հայաստան և ծավալում իրենց գործունեությունը։

Տրդատ Մեծի շփումը քրիստոնյաների հետ հալածանքներից է սկսվել։ Գրիգոր Լուսավորչի և Հռիփսիմյան կույսերի ավանդական պատմությունները («Վարքագրությունները») որոշակի պատկերացում են տալիս դրանց մասին։ Հալածանքների ուժգնությունն ու ծավալը իրենց հերթին վկայում են, որ քրիստոնյաները III—IV դարերի սահմանին Հայաստանում նշանակալից ուժ էին ներկայացնում և վտանգավոր թվում պետությանը։ Տրդատի կազմակերպած հալածանքները ժամանակով համընկնում են Հռոմում Դիոկլետիանոս կայսեր՝ քրիստոնյաների դեմ դաժան հալածանքներին (302—303 թթ.) և նույնիսկ, ինչպես վկայում է Ագաթանգեղոսը՝ այդ ժամանակի հայոց պատմության մեր հիմնական աղբյուրը, փոխադարձաբար կապված էին իրար հետ։ Երկու միապետներն էլ պետության ամրապնդման ու միավորման ճանապարհին քրիստոնյաներին դիտում էին որպես քայքայիչ տարր և ջանում վերացնել այն։ Համագործակցության այլ օրինակ պիտի համարել կայսր Մաքսիմինոս Դայայի արշավանքը 311 թ. Փոքր Հայքի և Արևմտյան Հայաստանի քրիստոնեական համայնքների դեմ, որոնք, հավանաբար, անհանգստացնում էին նաև Տրդատին։ Սակայն հալածանքների քաղաքականությունը արդեն իր դարն ապրել էր Է կայսր Կոստանդիանոս Մեծը 313 թ. իր հռչակավոր Միլանի հրովարտակով քրիստոնեությունը հայտարարում է օրինական և իրավահավասար կայսրության մյուս կրոններին։

Տրդատը իր նախկին քաղաքականության բեկման մեջ էլ ավելի հեռու է գնում. իսպառ հրաժարվում է հեթանոսությունից, արգելում այն, ընդունում քրիստոնեությունը և դարձնում հայկական պետության պաշտոնական կրոն։ Այս տեղի ունեցավ 314 թ., որով Հայաստանը դարձավ առաջին պետությունը, որտեղ քրիստոնեությունը պետական կրոն ճանաչվեց։

Այս շրջադարձի սոցիալ-դասակարգային հիմքերի մասին արդեն ասվել է վերը։ Հայաստանում այն ուներ նաև իր զորեղ քաղաքական հիմքը։ Հասկանալով, որ քրիստոնեությունը անհնարին է արմատախիլ անել, պետությունը ջանում է այն ընտելացնել, դարձնել հենարան երկրի միավորման ու կենտրոնացման գործում։ Այս վերջին խնդիրը, միշտ էլ կարևոր լինելով, այժմ, ֆեոդալական անջատողականության ծավալման համընթաց, դարձել էր պետության համար բախտորոշ խնդիր։

Քրիստոնեության պետական կրոնի վերածման բուն ընթացքն ու հանգամանքները ևս մեզ հիմնականում հայտնի են վերոհիշյալ վարքագրական եր-

կերից, ուստի և լրիվ չափով ստույգ չեն։ Հիմնական փաստերը, սակայն, կասկած չեն հարուցում։ Թագավորական իշխանությունը պայքար է սկսում հեթանոսության դեմ, հարվածներ տեղում նրա կենտրոնների՝ երկրով մեկ տարածված մեհյանների վրա, և ձգտում հեթանոսությունը արմատախիլ անել ժողովրդի միջից։ Մեհյանները դիմադրում են արքունի զորքերին իրենց ունեցած զինված ուժերով ու պայքարը վերաճում է արյունահեղ պատերազմի, որի ընթացքում մեկը մյուսի ետևից հիմնահատակ կործանվում են Արամազդի, Անահիտի, Վահագնի, Տիրի, Միհրի և մյուս աստվածների մեհյանները, քրմերը բնաջնջվում կամ ցրվում են, տաճարային հողերը՝ բռնագրավվում։ Տաճարների տեղերում կառուցվում են եկեղեցիներ ու վանքեր։ Ավանդությունների այս հաղորդումները հաստատվում են հնագիտական պեղումների արդյունքներով. մի շարք հնագույն եկեղեցական շենքերի հիմքերում հայտնաբերված են հեթանոսական տաճարային կառույցների բեկորներ։

Հայաստանի եկեղեցու գլուխ է կանգնում քրիստոնեության հաստատման մեջ կենտրոնական դեր խաղացած Գրիգորը, որը այդ դերին համապատասխան՝ «Լուսավորիչ» պատվանունն է վաստակել։ Ըստ ավանդության, Գրիգորը Տրդատ Մեծի հորը՝ Խոսրովին սպանող պարթև Անակի որդին է եղել և Տրդատի կազմակերպած հալածանքների ժամանակ մեծապես տուժել է, շարշարվել, բանտ նետվել և այլն։ Գրիգորը ձեռնադրվում է Կեսարիայում և վերադառնալով Հայաստան, կարգում այստեղ եկեղեցական ողջ նվիրապետությունը։

Այս գործողությունները, հիրավի, միայն սկիզբ էին դնում Հայաստանի քրիստոնեացմանը, իսկ նրա ընթացքը ընդգրկում է ողջ IV դարը և անցնում V դար։ Փավստոսի և Կորյունի պատմածից գիտենք, թե ինչ դժվարությամբ էր տեղի տալիս հեթանոսությունը և այն էլ ոչ միայն ժողովրդի միջավայրում, այլև նախարարության ու արքունիքի։ Հետագայում էլ պահպանվում են հեթանոսական ծեսերի ու արարողությունների որոշ տարրեր, որոնց մի մասը եկեղեցին որդեգրում է։

Այս պայքարի մեջ եկեղեցին գնալով հաստատվում է, դառնալով երկրի իշխող գաղափարական ուժը։ Զուգահեռաբար եկեղեցին ձեռք էր բերում և տնտեսական հզորություն։ Դեռևս սկզբում, հեթանոսական տաճարների կործանման շրջանում, նրան են անցնում բռնագրավված տաճարային լայնատարած հողերը՝ սրանց վրա ապրող ու աշխատող բնակչությամբ։ Դրանց ավելանում են նորանոր հողային նվիրատվություններ։ Բացի եկեղեցական տիրություններից, Տրդատը հոգևորականությանն է հանձնում յոթական հողամաս՝ «հող երդոյ», երկրի բոլոր գյուղերում և չորսական՝ բոլոր ագարակներում։ Եկեղեցուն են նվիրաբերվում և բազմաթիվ այլ հարստություններ։

Եկեղեցին, այսպիսով, ժամանակի ընթացքում դառնում է երկրի խոշորագույն հողատերերից մեկը և այդ առումով մրցում ոչ միայն նախարարական ամենահարուստ տների, այլև իրեն՝ թագավորի հետ։ Այս հանգամանքը երկվական բնույթ պետք է հաղորդեր նրա քաղաքականությանը IV դարում միապետության ու նախարարության միջև ծավալված պայքարի հարցում։ Իր գաղափարական էությամբ նա սատարելու էր միապետներին, շահագրգռված լինելով երկրի միավորմամբ ու կենտրոնացմամբ, իսկ տնտեսական՝ ֆեոդալական էությամբ՝ նախարարներին։ Հետագայում, սակայն, հայկական պետության բացակայության պայմաններում, եկեղեցին մասամբ փոխարինելու էր

պետությանը՝ ստանձնելով նրա որոշ ֆունկցիաները, և ընդհանրապես կարևոր նեցուկ էր ծառայելու ժողովրդին իր գոյության ու մշակույթի պաշտպանության համար մղվելիք պայքարում։

Այս բոլորով հանդերձ, սակայն, պետք է նշել նաև քրիստոնեության հաստատման բռնի ընթացքի, նրա՝ այլ դաղափարախոսությունների նկատմամբ դրսևորած ծայրահեղ անհաշտության խիստ բացասական ազդեցությունը հայ մշակույթի զարգացման վրա։ Հին հայկական նախաքրիստոնեական քաղաքակրթությունը հասել էր, ինչպես տեսանք նախորդ գլուխներում, բավական բարձր աստիճանի, կուտակել հոգևոր ու նյութական մշակույթի արժեքներ։ Եվ ահա քրիստոնեությունը խզեց ու խանգարեց հնից եկող քաղաքակրթական-մշակութային շատ թելեր ու ավանդույթներ։

Տրդատ Մեծի ժամանակաշրջանի այլ իրադարձությունների մասին մեզ լրիվ բան է հայտնի։ Այն V դարի հայ պատմիչների երկերում, հակադրվելով հաջորդ տասնամյակներին, հիշատակվում է որպես արքայի, նախարարության ու եկեղեցու կատարյալ համերաշխության շրջան։ Սակայն մեզ հասել է Տիգրանակերտի հունարեն մեծ արձանագրությունը, որը պատմում է այդ քաղաքի ապստամբության մասին հայոց թագավորի դեմ։ Ասված է նաև, որ ապստամբությունը ճնշելուց հետո որպես պատիժ քաղաքին, և ապագա ընդվզումների կանխման համար, քաղաքի միջնաբերդը գրաղեցվել է արքունի կայազորով, այլև որ թագավորի սույն հրովարտակը հրապարակվել է երկրի նաև մյուս քաղաքներում, ի զգաստացումն նրանց։

Այս երկու փաստերը՝ թագավորի՝ նախարարության հետ համերաշխության և քաղաքների հետ՝ գժտության մասին, ամենևին իրար չեն հակասում, և նույնիսկ իրար լրացնում են։ Քաղաքները դարեր ի վեր արքունի իշխանության հուսալի հենարան էին, շահագրգռված լինելով միավորված պետության գոյությամբ և նրանից՝ իրենց հասնող արտոնություններով։ Նախարարությունների ֆեոդալականացումը և այդ հիմքի վրա նրանց ծավալած գործողությունները անխուսափելիորեն ուղղված էին նաև քաղաքների դեմ։ IV դարում այս երկու հասարակական ուժերը ախոյաններ էին։ Բնականաբար, թագավորի մերձեցումը նախարարության հետ պիտի հանգեցներ քաղաքների արտոնությունների կրճատման, առանձին դեպքերում թերևս և վերացման։ Այսպիսի մի փաստ է, օրինակ, Հայաստանի հնագույն ու խոշորագույն քաղաքներից մեկի՝ Երվանդաշատի նվիրաբերումը Տրդատ Մեծի կողմից Կամսարական նախարարական տանը, որի մասին հաղորդում է Խորենացին։ Նման մի երևույթի մասին հելլենիստական դարաշրջանում խոսք լինել չէր կարող, սակայն այն հնարավոր ու իրական էր դարձել Արշակունյաց պետության՝ հասարակության ֆեոդալականացման նոր պայմաններին հարմարվելու ընթացքում, նրա այն փուլում, երբ դեռ նախարարների սիրաշահումը համարվել է կենտրոնական իշխանության հետ նրանց խաղաղ գոյակցության լավագույն միջոց ու քաղաքականություն։

Տրդատ Մեծի հետ, սակայն, անցնում է այդ քաղաքականության դարը։ Նրա որդի Խոսրով III-ը մի կողմ է դնում այն, որպես իրեն չարդարացրած, և դիմում է ուժի քաղաքականության։

3. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Տրդատ Մեծի մահվանից հետո երկու խոշոր նախարարական տոհմեր՝ Մանավազյանները և Օրդունիները, պատերազմ են սկսում իրար դեմ և շատ մարդիկ կոտորում։ Աղբիանոս եպիսկոպոսը, նախկին քրմական տոհմից, փորձում է նրանց հաշտեցնել, բայց անարգանքի է ենթարկվում, իսկ ըմբոստ տոհմերը տարածում են իրենց գործողությունները նաև արքունի հողերի վրա։

Նոր թագավոր Խոսրով III-ը (330—338 թթ.), որը իր կարճահասակության պատճառով Կոտակ էր կոչվել, բայց իր խստությամբ գերազանցում էր IV դարի մյուս հայ թագավորներին, սպարապետի հրամանատարությամբ զորք է ուղարկում իշխաններին սանձահարելու։ Վաչե Մամիկոնյան սպարապետը կոտորում է երկու տոհմերի բոլոր արական ներկայացուցիչներին։ Նրանց տիրույթները բռնագրավվում են և տրվում եկեղեցուն։

Այնուհետև ապստամբում է մի այլ նախարար՝ հայոց զորավարներից Դատաբեն Բզնունին, որը, ըստ Փավստոսի, «միաբանության խորհուրդ դրեց պարսից զորքերի իշխանների հետ և կամեցավ նրանց ձեռքը մատնել հայոց արքային»։ Սրան ձերբակալում են և թագավորի առջև քարկոծ անելով սպանում։ Տոհմը էլ ավելի խիստ է պատժվում, քան նախորդները՝ այն լիովին բնաջնջվում է, և նրա տիրույթները ներառվում են արքունի հողերի մեջ։

Խոսրովը, ջանալով կանխել նման դեպքերը, օրենք է սահմանում, որ խոշորագույն նախարարները, հատկապես «հազարավորներն» ու «բյուրավորները», մշտապես արքունիքում գտնվեն, իր հսկողության ներքո։ Այս միջոցը, սակայն, էական պտուղներ չի տալիս։ Կրկին ապստամբություն է ծագում, և այս անգամ ավելի վտանգավոր. ընդվզում է պետության առաջին դեմքերից մեկը՝ Աղձնիքի Բակուր բդեշխը, դարձյալ ապավինելով Պարսկաստանին։ Բայց սա էլ պարտություն է կրում Խոսրովի ուղարկած զորքերից և մարտում սպանվում իր եղբայրների ու որդիների հետ միասին։

330-ական թթ. կեսերին Հայաստանը ենթարկվում է մերձկասպյան մաղքութ (մասսագետ) ցեղերի ասպատակության։ Անցնելով Կուր գետը, մաղքութները հասնում են կենտրոնական Այրարատ նահանգը և գրավում Վաղարշապատը։ Հանկարծակիի բերված, Խոսրովը խույս է տալիս և փակվում Կոգովիտ գավառի Դարույնք բերդում, մինչև որ հնարավոր է լինում ժողովել ու կարգի բերել զորքը։ Այնուհետև Վաչե սպարապետի գլխավորությամբ հայոց զորքը հակահարձակման է անցնում, գրավում Վաղարշապատը և մեծ ճակատամարտ տալիս մաղքութներին։ Սրանք կատարյալ պարտություն են կրում և ցրվում, իսկ նրանց թագավոր Սանեսանը սպանվում է։

Հենվելով հայկական պետության դարերի ընթացքում ստեղծած ռազմավարչական հզոր մեքենայի վրա, Խոսրով Կոտակին, ինչպես տեսնում ենք, առանց մեծ դժվարության հաջողվում է հաղթող հանդիսանալ թե՛ ներքին հակառակորդի, և թե՛ արտաքին թշնամու նկատմամբ։ Պետական մեքենան դեռևս հաստատուն է գործում և ապահովում է ոչ միայն ռազմական գերակշռություն, այլև երկրի ներքին կայուն վիճակ ու խաղաղ շինարարության հնարավորություն։

Խոսրովի կարճատև թագավորությունը նշանավորվում է քաղաքաշինությամբ։ Հին մայրաքաղաք Արտաշատից հյուսիս-արևմուտք, հարմարավետ մի վայրում, որի կենտրոնում միջնաբերդի համար պիտանի բլուր էր բարձրանում,

հիմնադրվում է հայոց թագավորների նոր նստավայրը՝ Դվինը, որը շուտով նսեմացնում է Արտաշատին, խլելով նրանից միջազգային տարանցիկ առևտրի հանգույցի դերը։ Դվինի մերձակայքում անտառներ են տնկվում, երկու մեծ արգելավայրեր են ստեղծվում, որոնցից մեկը անվանվում է «Տաճար մայրի», մյուսը՝ «Խոսրովակերտ»։ Սրանք լցվում են այլևայլ կենդանիներով ու գազաններով և վերածվում արքայական որսատեղիի։

Խոսրովի գործունեությանը նպաստել է այն հանգամանքը, որ Պարսկաստանը և Հռոմը տակավին պահպանում էին Մծբինում կնքված պայմանագիրը և պատերազմներ չէին վարում։ Խաղաղությունը խախտվում է 338 թ. Պարսկաստանի հարձակմամբ Հռոմի տիրապետության տակ գտնվող երկրների, ինչպես և Հայաստանի վրա։ Այդ ժամանակ վախճանվում է Խոսրովը։

Նրա հաջորդը՝ Տիրան թագավորը, շարունակում է իր հոր՝ Խոսրովի քաղաքական գիծը, բայց պակաս բարենպաստ ներքին ու արտաքին պայմաններում։ 345 թ. Պարսկաստանը կրկին պատերազմի է բռնվում Հռոմի դեմ, ու դարձյալ տուժում է Հայաստանը։ Ներքին բնագավառում շարունակվում է թագավորի ու մի շարք նախարարական տների հակամարտությունը, որին ավելանում են և թագավորական իշխանության առաջին բախումները եկեղեցու հետ։

Հայոց եկեղեցին իր կազմակերպման օրից ղեկավարում էր Գրիգոր Լուսավորչի տոհմը, որի ժամանակ եկեղեցին ընթացել է անընդհատ հզորացման ուղիով թե՛ գաղափարական, և թե՛ տնտեսական ու քաղաքական բնագավառներում։ Վերջին հանգամանքը չէր կարող անմռունչ ընդունվել աշխարհիկ իշխանությունների կողմից։ Եվ ահա գժտություն է ծագում Տիրանի և Հուսիկ կաթողիկոսի միջև։ Հուսիկը սպանվում է թագավորի հրամանով։ Կաթողիկոսությունը խլվում է Լուսավորչի տոհմից և տրվում ոմն Փառենի։ Ակներևաբար, թագավորին գրգռում էր եկեղեցու քաղաքականությունը, որն իր բնույթով սկսում էր մերվել նախարարական շարժմանը։

Նախարարությունների դեմ կենտրոնական իշխանության վարած պայքարում Տիրանի օրոք հանդես է գալիս մի խոշոր քաղաքական գործիչ, որը գլխավորում է պետության կենտրոնացման ու միավորման գործը՝ «Հայր-մարդպետը», որին Փավստոսը, լինելով նախարարության ջատագով, ամենաբացասական կերպարանքով է ներկայացնում։ Սրա նախաձեռնությամբ խիստ պատրժվում են Արծրունի և Ռշտունի ապստամբ նախարարական տոհմերը։

Տիրանին հաջորդում է իր որդի Արշակ II-ը, շուրջ 350 թ.։ Արշակի թագավորության առաջին տասը տարիները, մինչև 359 թ., խաղաղ են անցել։ Նա վերադառնում է Տրդատ Մեծի մեղմ քաղաքականությանը, ձգտելով համերաշխության եզրեր գտնել եկեղեցու և նախարարության հետ։ Կաթողիկոսությունը վերադարձվում է Գրիգոր Լուսավորչի տոհմին՝ այդ կարևոր պաշտոնն է գրավում Հուսիկի թոռ Ներսես Մեծը, որը մինչ այդ զինվորական էր։ Արշակի իշխանության առաջին շրջանում Ներսեսը թագավորի մերձավորագույն գործակիցն ու խորհրդատուն էր։ Հռոմի հետ հարաբերությունները կարգավորելու նպատակով պատվիրակություն է հղվում կայսեր մոտ՝ Ներսեսի գլխավորությամբ։ Այս տարիներին է, որ Արշակը Մասիսի հարավակողմում հիմնադրեց իր «դաստակերտ» Արշակավանը, որը հետագայում մեծ խռովության պատճառ դարձավ։

Աշխարհիկ և հոգևոր իշխանությունները ձեռնամուխ են լինում օրենսդրական խնդիրներին։ Հրավիրվում է առաջին հայկական եկեղեցական ժողովը

Աշտիշատում, որտեղ բազմաթիվ կանոններ են ընդունվում թե՛ եկեղեցական, և թե՛ աշխարհիկ բնույթի։ Հատկանշական է այն կետը, որ հորդորում է տերերին՝ ստորադրյալների (աշակերտների, ստրուկների) նկատմամբ գութ ունենալ, չծանրաբեռնել չափազանց հարկերով և այլն, հանգամանք, որը վկայում է շահագործման ծանրության մասին։ Մի շարք կանոններ են ընդունվում նաև հեթանոսական կրոնի ու կենցաղի դեմ, օրինակ, արգելվում է ամուսնությունը մերձավոր հարազատների միջև։ Հատուկ ուշադրություն է դարձվում հիվանդանոցների, անկելանոցների կազմակերպմանը՝ պետական միջոցներով։

Երկրի այս ներքին խաղաղ վիճակը, սակայն, 350-ական թթ. վերջերին խախտվում է։ Կրկին քաղաքական ասպարեզ է իջնում Տիրանի օրոք լայն գործունեություն ծավալած Հայր-մարդպետը և դուրս մղում Ներսես կաթողիկոսին, դառնալով Արշակ թագավորի առաջին խորհրդատուն։ Ներսեսին ստիպում են զիջել կաթողիկոսությունը ոմն Զունակի, որը, Փավստոսի արտահայտությամբ, «ստրուկ էր՝ արքունի ստրուկներից», այսինքն՝ հլու-հպատակ էր արքայի կամքին։ Անհնազանդության առիթով դաժանորեն պատժվում է Կամսարականների նախարարական տոհմը, նրանից խլվում է Երվանդաշատ քաղաքը, որ նվեր էր ստացել Տրդատի ժամանակ։ Հայր-մարդպետը հատկապես ձգտում էր սասանել եկեղեցու տնտեսական հզորությունը, բացեիբաց պարսավելով Տրդատ Մեծի՝ եկեղեցուն առատորեն հողեր նվիրաբերելու քաղաքականությունը։ Նրան, սակայն, չի հաջողվում իրականացնել իր ծրագրերը՝ նա սպանվում է նախարարների կողմից։

Սրվում է արքունիքում պարսկասեր և հռոմեասեր կուսակցությունների պայքարը։ Այդ պայքարում զոհվում են թագավորի մի շարք մերձավորներ՝ նրա եղբորորդիներ Գնելը և Տիրիթը, որոնք նախապես պատանդներ էին հռոմեացիների մոտ, Մամիկոնյան տոհմի նահապետ Վարդանը։ Սպանվում է Օլիմպիա թագուհին, որին Արշակին կնության էր ուղարկել Կոստանդիոս կայսրը, և Արշակն ամուսնանում է Ռնելի այրի Փառանձեմի հետ։

Հոսանքների պայքարը սողոսկում է նաև նախարարական տների ներսը։ Այսպես, Մամիկոնյան տոհմը, որ ընդհանուր առմամբ հակված էր դեպի Հռոմը, երկու թևի է բաժանվում. մեկը ներկայացնում է Վասակ սպարապետը, Արշակ թագավորի մերձավորագույն զինակիցը, մյուսը՝ նրա եղբայր Վահան Մամիկոնյանը, որը դիմում է իսկական դավաճանության, անցնում Պարսկաստան և դառնում Շապուհ II-ի գործակալ (հետագայում սա սպանվում է իր որդի Սամվելի կողմից)։ Պարսկաստան են անցնում և մարդպետական տոհմի իշխաններից մեկը՝ Գղակ անունով, Մեհրուժան Արծրունին և Արտավան հայ իշխանը։

359 թ. նոր պատերազմ է ծագում Հռոմի և Պարսկաստանի միջև։ Նույն տարին պարսիկները մտնում են և Հայաստանի հարավային շրջանները, գրավում Տիգրանակերտը և Ձիատա ամրոցը, ավերում դրանք և գերեվարում բնակչությանը։ Նրանք պաշարում են Անգեղ բերդը, որ չեն կարողանում գրավել և Դարանաղի գավառի Անի բերդը, որը առնում են դավաճանության միջոցով և թալանում, քանդում Արշակունյաց տոհմական դամբարանները։

Հենց այս ժամանակ էլ, ըստ երևույթին, կործանվում է և Արշակավանը։ Հելլենիստական ավանդույթների համաձայն հիմնադրված այս քաղաքը անչափ գրգռում էր նախարարներին, նախ այն պատճառով, որ թագավորի իշ-

խանության մի նոր հենարան էր, և ապա՝ Արշակի երկրով մեկ արված հրավերին՝ գալ բնակվել նոր քաղաքում, արձագանքում էին մեծ մասամբ նախարարների շահագործման տակ տառապող աշխատավոր ղանգվածները և խումբ-խումբ փախչում, պատսպարվում այնտեղ։ Օգտվելով պարսկական զորքերի ներխուժումից, որոնց Հայաստան էր առաջնորդել Մեհրուժան Արծրունին, նախարարների առավել գրգռված մասը միանում է նրանց և գրոհում Արշակավանի վրա։ Նորաստեղծ քաղաքը հիմնահատակ քանդվում է, բնակիչները կոտորվում կամ պատժվում են։

Արշակ II-ը տեղի տալով անցնում է Վրաստան և շուտով վերադառնում վրացական մի զորամասի հետ միասին։ Նրա շուրջն են հավաքվում կողմնակիցները։ Նախարարական և արքունի զորքերի ճակատամարտը չի հանգեցնում կողմերից որևէ մեկի հաղթանակին։ Խախուտ հաշտություն է կնքվում Ներսեսի միջնորդությամբ, որը կրկին վերադարձել էր իր կաթողիկոսական պաշտոնին։

360 թ. Կոստանդիոս կայսրը Արշակ II-ին հրավիրում է Կեսարիա, ամրապնդելու համար հայ-հռոմեական դաշինքը։ Շուտով իշխանությունը անցնում է կայսր Հուլիանոսին, որը հեթանոսական կրոնի վերականգնման իր փորձերի և քրիստոնեության հալածանքների համար ստացել է «Ուրացող» մականունը։ 363 թ. Հուլիանոսը մեծ զորքով հարձակվում է Պարսկաստանի վրա։ Նրա երկու զորաբանակներից մեկը շարժվում է Հայաստանի հարավային շրջաններով ու այստեղից, Արշակ II-ի զորքերի հետ միասին, ներխուժում ու ավերում Մարաստանի Խիլիկոմ երկրամասը։ Հուլիանոսի հիմնական զորաբանակը շարժվում է Եփրատի երկայնքով և հասնում Տիզբոնի մոտերքը։ Սակայն Հուլիանոսը իր անզգուշության հետևանքով ընկնում է ճակատամարտում։ Նորընտիր կայսր Հովիանոսը, շտապելով վերադառնալ Հռոմ՝ իր իշխանությունն ամրապնդելու համար, պարսիկների հետ հաշտություն է կնքում, որը հռոմեական պատմիչ Ամմիանոս Մարկելլինոսն իսկ անվանում է «ամոթալի պայմանագիր», արված զիջումներից առավել ամոթալի համարելով այն կետը, ըստ որի Հռոմը հանձն է առնում այլևս օգնություն ցույց չտալ Հայաստանին։ Բացի այդ, Պարսկաստանին են զիջում Հայաստանի հարավային մի քանի երկրամասեր։

Արդեն հաջորդ՝ 364 թ. Շապուհ II-ը, ապահով զգալով իրեն Հռոմի միջամտությունից, հարձակվում է Հայաստանի վրա։ Սկսվում է քառամյա հայ-պարսկական պատերազմը, որի ընթացքում Հայաստանը, ինչ-որ չափով միավորված այս վտանգի առջև, անհավասար պայքար է մղում իր անկախության համար։ Սակայն տեսնելով պատերազմի մոտալուտ աննպաստ վախճանը, նախարարներից շատերը սկսում են լքել Արշակի ճամբարը, մի մասը անցնելով պարսիկների կողմը, մյուսը՝ իբր չեզոք գիրք բռնելով, որը առկա պարագաներում շատ չէր տարբերվում առաջին խմբի վարքագծից։

Այս պայմաններում Շապուհ II-ը հրավիրում է Արշակ II-ին իր մոտ հաշտություն կնքելու։ Այս խորամանկ առաջարկը չերմ արձագանք է գտնում հայ նախարարների միջավայրում։ Արշակը ստիպված է լինում ընդունել հրավերը և Վասակ Մամիկոնյանի հետ միասին ներկայանում է Տիզբոն։ Այստեղ նա կալանավորվում է ու նետվում հեռավոր բերդերից մեկը, ուր և կնքում է իր մահկանացուն։ Արշակի և Վասակի երթը Տիզբոն, նրանց մահը իրենց գեղարվեստական արտացոլումն են գտել հայ ժողովրդական բանահյուսության մեջ։

368 թ. Շապուհը կրկին զորք է ուղարկում Հայաստան իր կողմն անցած երկու հայ իշխանների՝ Ներքինի Դղակի և Արտավանի հրամանատարությամբ։ Թագուհի Փառանձեմը արքայազն Պապի հետ փակվում են Արտագերս ամրոցում։ Երկար ապարդյուն պաշարումից հետո Դղակն ու Արտավանը հանդիպման գնալով Փառանձեմի հետ՝ հանձնվելու հորդոր կարդալու նպատակով, իրենք են որոշում լքել պարսիկներին և օգնել թագուհուն։ Գիշերը բերդի կայազորը անսպասելի հարձակմամբ մեծ չարդ է տալիս պարսկական զորքին։ Թագաժառանգ Պապը ուղարկվում է հռոմեացիների մոտ։

Կայսր Վաղեսը, ստանալով հայերի խնդրանքը՝ թագավորեցնել նրան, և միևնույն ժամանակ չցանկանալով խախտած լինել Հովիանոսի կնքած «ամոթալի պայմանագիրը», հանձնարարում է Տերենտ զորավարին Պապին իշխանության գլուխ դնել, բայց առանց թագի և օժանդակ զորքի։ Պարսիկները, սակայն, ամենևին չեն գնահատում հռոմեական այս «նրբանկատությունը» և նոր զորք են ուղարկում Հայաստան՝ Զիկ և Կարեն զորավարների հրամանատարությամբ։ Պապը՝ Դղակի և Արտավանի ուղեկցությամբ, փախչում է մերձսևծովյան շրջանները՝ Լազիկա, իսկ պարսկական զորքը գրավում է Արտագերսը և գերի վերցնում Փառանձեմ թագուհուն։ Նույն 369 թ. պարսկական զորքերը, հայ դավաճան իշխաններ Մեհրուժան Արծրունու և Վահան Մամիկոնյանի աջակցությամբ, մեկը մյուսի ետևից առնում ու հիմնահատակ ավերում են Հայաստանի խոշորագույն քաղաքները՝ Արտաշատը, Վաղարշապատը, Երվանդաշատը, Զարիշատը, Զարեհավանը և Վանը։ Սրանց բնակչությունը մեծ մասամբ գերեվարվում է Պարսկաստան։

Վերջապես, 370 թ. Վաղեսը զորք է ուղարկում Արինթեոս զորավարի գլխավորությամբ, և սա թագավորական գահին է նստեցնում Պապին։ Հաջորդ 371 թ., տեսնելով պարսիկների պատրաստությունները՝ Հայաստան արշավելու համար, կայսրը օժանդակ զորքեր է ուղարկում։ Բագավանի մոտ հռոմեական և հայկական զորքերը Վասակ Մամիկոնյանի որդի սպարապետ Մուշեղի հրամանատարությամբ կարևոր հաղթանակ են տանում, որը վերջապես ամրապնդում է Պապի իշխանությունը և հնարավորություն տալիս մի քանի տարի զբաղվել երկրի ներքին գործերով։

Առաջին ձեռնարկումն է լինում Արշակի իշխանության վերջում անջատված երկրամասերի միավորումը։ Նոր սպարապետին, չնայած իր ունեցած զորքի համեմատական փոքրաթվությանը, հաջողվում է մեկը մյուսի ետևից հնազանդության բերել Հայաստանի գրեթե բոլոր ծայրագավառները։ Կարճ ժամանակով վերականգնվում է Մեծ Հայքի պետության տարածքը։

Սանձահարելով կենտրոնախույս նախարարներին, Պապը անդրադառնում է եկեղեցուն։ Նախորդ հայ թագավորները, թեև մերթ ընդ մերթ գժտվում էին հոգևոր իշխանության հետ, նույնիսկ սպանում կամ գահազրկում կաթողիկոսներին, բայց չէին դիպչում նրանց հեղինակության տնտեսական պատվանդանին՝ հողային ունեցվածքին։

Պապը առաջինն է դիմում այդպիսի միջոցների։ Վերացվում է բնակչության կողմից եկեղեցուն առանձին տրվող հարկը՝ տասանորդը, եկեղեցու հզորության մի երկրորդ կարևոր հենարանը։ Էապես նվազեցվում են այն հողերը, որ սահմանված էին երկրի բնակավայրերում դեռևս Տրդատի ժամանակ եկեղեցական պաշտոնյաների համար։ Ավաններում յոթական և ագարակներում չորսական հողամասերից («հող երդոյ»), թողնվում է միայն երկուական՝

գյուղի երևցի և սարկավագի համար։ Երեցների ու սարկավագների եղբայրներին ու որդիներին, որ աղատ էին թագավորական ծառայությունից (զինվորական և այլ), ղրկում են այդ արտոնությունից։

Բնական է, որ այս բոլոր քայլերը, դիպչելով եկեղեցու ամենակենսական շահերին, թշնամություն ու ատելություն էին առաջացնում եկեղեցականների մեջ Պապի նկատմամբ։ Այդ ատելությունը փոխանցվել է և մեր V դարի պատմիչներին, որոնք գույներ չեն խնայում այդ իշխողի արատները, «դիվական զազրանքները» ու խելագարությունը ներկայացնելու համար։ Նրան վերագրում են նաև Ներսես կաթողիկոսի մահը՝ թունավորման միջոցով, որը, դատելով Փավստոսի նկարագրած ախտանշաններից, կարող էր և սոսկական հիվանդություն լինել։ Պետք է ասել, որ Պապի այլ կերպար է տալիս հռոմեական պատմիչ Ամմիանոս Մարկելլիանոսը, այս ժամանակի պատմության մեր հիմնական աղբյուրը, պատկերելով նրան որպես մի ձեռներեց, խիզախ ու խելոք իշխողի։ Ինչևիցե, Պապը IV դարի հայոց թագավորների շարքում առավել վառ և ինքնատիպ անձնավորությունն է, որի բոլոր քայլերը ուղղված են եղել դժվարագույն պայմաններում պետության միավորմանն ու ամրապնդմանը, նրա անկախացմանը արտաքին ուժերից։

Հռոմեական զենքի ուժով գահին բազմած Պապը լավ էր ըմբռնում, որ հռոմեացիները մինչև այն պահն են դաշնակից, քանի դեռ Հայաստանն ու նրա թագավորը պատրաստ են կատարելու նրանց կամքը։ Ուստի իր համար որոշ ներքին հենարան ու ռազմական ուժ ապահովելուց հետո, նա դիմում է դիվանագիտական փորձերի՝ կապ հաստատելու Պարսկաստանի հետ՝ ուժերի հավասարակշռման միջոցով իր ձգտած անկախությունը ձեռք բերելու նպատակով։

Սակայն հռոմեացիները ուշի-ուշիով հետևում էին Պապի յուրաքանչյուր քայլին։ Հայոց թագավորը հրավիրվում է կայսեր մոտ, իբր խորհրդակցելու համար։ Կիլիկիայի Տարսոն քաղաքում նա իր շքախմբի հետ քողարկված բանտարկության է ենթարկվում։ Հասկանալով բանի էությունը, Պապը երեք հարյուր յուրայինների հետ դուրս է պրծնում քաղաքից և բռնում Հայաստանի ճանապարհը։ Մեծ հմտությամբ նա շրջանցում է իրեն որսալու ուղարկված հռոմեական զորամասերը և հասնում անվտանգ վայր։

Հավանական է, որ այս դեպքից հետո Հայաստանի և Պարսկաստանի միջև բանակցությունը ուժեղացել էր։ Կայսրը հանձնարարում է Հայաստանում Տերենտին փոխարինած Տրայանոս զորավարին՝ սպանել Պապին։ Խաբեությամբ ու շողոքորթությամբ թմրեցնելով Պապի զգոնությունը, Տրայանոսը խնջույքի է հրավիրում նրան և սպանել տալիս՝ գինու բաժակը ձեռքին բռնած պահին։

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ՀՌՈՄԻ ԵՎ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ ԵՎ ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Պապից հետո հռոմեացիների ընտրությամբ Հայաստանի թագավոր է պսակվում նրա ազգակիցներից Վարազդատը, որին մեր պատմիչները բնութագրում են որպես հուժկու մարմնամարզիկի և միամիտ մարդու։ Այս տարիներին ծավալվում է Մուշեղ Մամիկոնյանի քաղաքական գործունեությունը, որը մասամբ կաշկանդված էր նախորդ արքայի հետ նրա ունեցած հակասություն-

ներով։ Սպարապետը բարենորոգումների լայն ծրագիր է առաջ քաշում, որի նպատակն էր ամրապնդել հայկական պետությունը, ուժեղացնել քաղաքական կենտրոնացումը։ Սակայն Մուշեղը իր առաջարկների իրականացման համար ներքին որևէ հենարան չէր տեսնում, հույսը դնելով միայն Հռոմի վրա։

Մուշեղ Մամիկոնյանի քաղաքական հակառակորդն էր Բատ Սահառունին, որը մեծ հեղինակություն էր վայելում թագավորի մոտ։ Սրա թելադրանքով Վարազդատը Մուշեղին մեղադրանք է ներկայացնում դավաճանության և Պապի սպանությանը օժանդակելու մեջ, և նա սպանվում է մոտավորապես նույն պարագաներում, ինչ որ Պապը՝ խնջույքի ժամին։ Շուտով, սակայն, պարզվում է, որ Արշակունի թագավորը իսկապես չունի ներքին հենարան։ Սրա դեմ ընդվզում է, այս անգամ Պարսկաստանի օժանդակությամբ, Մամիկոնյան տոհմի մի այլ ներկայացուցիչ, Մանվելը, որը չափվելով արքայի հետ ճակատամարտում, դուրս է անում նրան երկրից։ Վարազդատը անցնում է հռոմեացիների մոտ, կալանավորվում և աքսորվում (378 թ.)։ Հայաստանում թագավորում է Պապի որդի Արշակ III-ը (378—389 թթ.) իր կրտսեր եղբոր՝ Վաղարշակի գահակցությամբ և Մանվել Մամիկոնյանի խնամակալությամբ, որը տևում է մինչև վերջինիս մահը՝ 385 թ.։

Դեռևս Վարազդատի օրոք, 375—376 թթ., պարսկա-հռոմեական դիվանագիտական շրջաններում սկսում է շոշափվել Հայաստանի խնդրի լուծման նոր ուղի՝ երկրի բաժանումը երկու պետությունների միջև։ Նոր կայսրը՝ Թեոդոսը, և պարսից արքա Շապուհ III-ը (385—389 թթ.) շարունակում են արծարծել այդ խնդիրը և համաձայնության են գալիս 387 թ.։ Հայաստանը բաժանվում է երկու անհավասար մասերի՝ արևմտյան գավառները՝ Կարին, Եկեղիք, Դերջան, Մանանաղի, Դարանաղի, Խորձյան, Մզուր և այլն անցնում են Հռոմին, իսկ մնացած ամբողջ երկիրը՝ Պարսկաստանին։ Արշակ III-ը տեղափոխվում է հռոմեական մասը և այնտեղ թագավորում ևս երկու տարի։ Պարսկական մասում նոր թագավոր է կարգվում Խոսրով IV-ը՝ նույն Արշակունի տոհմից։ Այս դեպքերից հետո Արշակ III-ը շուտով մահանում է, սակայն հռոմեացիները նրան հաջորդ չեն նշանակում, այլ երկրամասը դարձնում են իրենց պետության նահանգներից մեկը, հռոմեական նահանգապետի կառավարման ներքո։

Խոսրով IV-ը ևս երկար չի թագավորում։ Նրանից դժգոհ հայ նախարարները, ինչպես հաղորդում է Ղազար Փարպեցին, մեղադրում են նրան հռոմեասիրության մեջ, և պարսից թագավորը Պարսկաստան է կանչում ու գահազրկում Խոսրովին։ Խոսրովի փոխարեն գահին է նստում նրա եղբայր Վռամշապուհը։

Վռամշապուհի թագավորության երկար ժամանակաշրջանը (389—415 թթ.) եղել է Հայաստանի համար արտաքին խաղաղության և ներքին հանգստության շրջան։ Կայսրությունն ու Սասանյանները լուծված էին համարում Հայաստանի խնդիրը, մյուս կողմից Վռամշապուհը հրաժարվել էր նախարարության նկատմամբ ակտիվ քաղաքականությունից, որը վարելու միջոցներ էլ չուներ, և ստանձնել էր քաղաքական ոլորտում սոսկ միջնորդի դեր հայ նախարարության և պարսից արքայի միջև։ Երկրի հոգևոր կյանքում մեծ դեր էր խաղում դեռևս Խոսրով IV-ի ժամանակ կաթողիկոս ընտրված Սահակ Պարթևը՝ Ներսես կաթողիկոսի որդին, հանձին որի Լուսավորչի տոհմը նորից ձեռք էր բերել կաթողիկոսության պաշտոնը։

Վռամշապուհի մահվանից հետո կրկին թագավորում է Պարսկաստանից վերադարձած Խոսրով IV-ը, բայց մի քանի ամիս միայն։ Սրա մահվանից

հետո պարսից Հազկերտ I-ը նոր քաղաքականություն է կիրառում Հայաստանի նկատմամբ, մի կողմից, երկյուղ կրելով Հայաստանի և Հռոմի՝ դավանանքի հարազատությունից ծագող սպառնալիքներից և մյուս կողմից, համարելով, որ արդեն հասունացել են Հայաստանը Պարսկաստանին քաղաքականապես ու նույնիսկ կրոնի առումով միաձուլելու պայմանները։ Այդ նպատակով հենց Հայաստանի թագավոր է կարգվում պարսից արքայազն Շապուհը (416—420 թթ.)։ Իրականում, սակայն, վերոհիշյալ պայմանները ոչ միայն չէին հասունացել, այլև երբեք չէին հասունանալու, ինչպես պիտի ցույց տար ապագան։ Շապուհը մնում է Հայաստանի համար խորթ տարր։ 420 թ. նա իր հոր հետ միասին սպանվում է պարսկական արքունիքում տեղի ունեցած հեղաշրջման ժամանակ։

Պարսկաստանի գահը գրավում է Վռամ V-ը, որի օրոք սաստկանում են Հազկերտի թագավորության վերջին շրջանում ծայր առած՝ քրիստոնյաների հալածանքները, և պատերազմ է սկսվում Հռոմի դեմ։ Կրկին պատերազմի թատերաբեմ է դառնում Հայաստանը, նրա հարավային շրջանները։ Սակայն 421—422 թթ. պատերազմի՝ Պարսկաստանի համար խիստ անբարենպաստ ընթացքը ստիպում է Վռամ V-ին ոչ միայն հաշտության պայմանագիր կնքել Հռոմի հետ, այլև վերանայել Հայաստանի նկատմամբ իր նախորդի վերջին տարիներին վարած քաղաքականությունը։ 423 թ., եռամյա անիշխանությունից հետո, Հայաստանում թագավոր է կարգվում Վռամշապուհի որդի Արտաշեսը։

Արտաշեսի վեցամյա թագավորության ընթացքում թագավորն ու նախարարությունը կրկին պայքարի մեջ են մտնում։ Եկեղեցին այս պատասխանատու պահերին զգում է, որ կենտրոնական իշխանության հետ իր ունեցած հակասությունները պակաս կարևոր են, քան ընդհանուր շահերը, և Սահակ Պարթևը հանդես է գալիս Արտաշեսի հետ ձեռք-ձեռքի՝ որպես պետության պահպանման ջատագով։ Նա ջանում է հաշտության եզրեր գտնել թագավորի ու նախարարության միջև, բայց ապարդյուն։ Վերջինս արդեն, ինչպես հայտնում է Ղազար Փարպեցին, ընդունել էր այսպիսի որոշում. «...այլևս հայ թագավոր պետք չէ, այլ ժամանակ առ ժամանակ պարսիկ որևէ իշխան կգա և մեզ վերակացու կլինի»։ Պարսկաստանի համար ավելի հաճելի և ընդունելի առաջարկ, քան այս, լինել չէր կարող։ Արտաշեսը գահազուրկ արվեց, նրա հետ միասին կաթողիկոսությունից զրկվեց և Սահակ Պարթևը։ Հայաստանը վերածվեց պարսկական նահանգի՝ մարզպանության, և մարզպան կարգվեց պարսիկ մեծատոհմիկ Վեհմիհրշապուհը։

Այսպես 428 թ. վերացավ Արշակունի հարստությունը և նրա հետ՝ հին հայկական պետությունը։ Ինչպես տեսանք, նրա վերացումը սոսկ արտաքին քաղաքական ու ռազմական ճնշման հետևանք չէր, այլ նաև երկրի ներքին զարգացման, ֆեոդալական նոր հարաբերությունների հաստատման, որոնց հետ պետության հակասությունը գնալով ուժեղանում էր, մինչև որ հանգեցրեց նրա ճգնաժամին ու անկման։ Կորցնելով իր պետականությունը, Հայաստանը կորցրեց մի միջոց ու զենք, որով նա պաշտպանվում էր արտաքին թշնամուց։ Սակայն հայ ժողովուրդը հենց այդ օրհասական պահին մի նոր, միանգամայն այլ բնույթի զենք ու միջոց կռեց դարերի մեջ իր կյանքն ու ինքնությունը ապահովելու։

5. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԸ ԵՎ ՀԱՅ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԸ

Գրերի գյուտը կարծես մի ջրբաժան գիծ լինի հայ ժողովրդի երեքհազարամյա պատմության մեջ. նրանից առաջ՝ հայ հասարակության քաղաքական ակտիվություն, հզոր պետության ստեղծում, նվաճումներ, մշակույթի բնագավառում՝ արժեքների աստիճանական կուտակում, նրանից հետո՝ պետական առումով նվազում, բայց մշակութային հզոր վերելք, քաղաքական ազդեցության տարածման փոխարեն՝ քաղաքակրթական ազդեցության առավել լայն տարածում։

Վռամշապուհի թագավորության քառորդդարյա անդորրը մի բարեբախտություն էր, որ դյուրացրեց հայոց գրերի հղացումը, ծնունդն ու առաջին քայլերը։ Եվ բարեբախտություն էր Մեսրոպ Մաշտոցի նման հանճարեղ միտք ու ժողովրդի կարևորագույն հոգսը ըմբռնելու և դարմանելու կարողություն ունեցող մի անձնավորության հանդես գալը։

Հայ հասարակությունը մինչ այդ էլ զուրկ չէր գրերից։ Դեռևս յոթ-ութ հարյուրամյակ առաջ այն սկսել էր օգտագործել արամեերեն և հունարեն լեզուները՝ իրենց դպրությունների հետ միասին, իսկ III—IV դարերում սրանց էին ավելացել ասորերենն ու պարսկերենը, որոնցով էլ տարվում էին գործերը և արվում վճիռները արքունի դիվաններում։ Բացի այդ, ըստ ավանդության, գոյություն են ունեցել նշանագրեր նաև հայոց լեզվի համար, այսպես կոչված «Դանիելյան նշանագրերը», որոնք սակայն, ընդօրինակված լինելով օտար այբուբեններից, չէին բավարարում հնչյուններով հարուստ հայոց լեզվի պահանջներին, ուստի և, ինչպես և մի շարք այլ պատճառներով, գրեթե տարածում չգտան, մնալով սոսկ քրմության նեղ շրջանակի հատուկ գրառումների միջոց։

Մինչդեռ իր կատարյալ ծաղկումն էր ապրում հայոց լեզուն, հայ, այսպես ասած, բանավոր գրականությունը՝ ժողովրդական բանահյուսությունը, զարգանում էր գիտական-փիլիսոփայական մերձեցումը կյանքի երևույթներին, հայ այլազելու պատմագրությունը և այլն, և այլն։ Այս ամենը հրամայաբար պահանջում էին ունենալ հայոց լեզվի գրեր, որոնք կստեղծեին մեծ նախադրյալներ ու հնարավորություններ մշակույթի ծավալման ու ծաղկման համար։

Հարկավ, ճիշտ այս ձևով չէ, որ ժամանակակիցների կողմից գիտակցվում էր գրերի անհրաժեշտությունը։ Որպես անմիջական պատճառ ծառանում էր քրիստոնեական «հոգևոր սնունդը» ժողովրդին հասցնելու նկատառումը, առաջին հերթին՝ Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը։ Բայց այս նկատառման մեջ, առավել կամ պակաս գիտակցված ձևով, խտացված էին մնացած բոլոր վերը նշված պատճառները, և, բացի այդ, թերևս առավել կարևորագույնը՝ հայ մշակույթի բյուրեղացման անհրաժեշտությունը պետության անկման ու սպասվող նորանոր քաղաքական արհավիրքների պարագաներում։

Մեսրոպ Մաշտոցը ծնվել է Տարոն գավառի Հացեկաց գյուղում շուրջ 360 թ.։ Խոսրով IV-ի օրոք նա ծառայության է մտնում արքունիքում, վարժ լինելով արդեն հունական դպրությանը։ Արքունիքում, որ երկրի մշակութային կարևոր կենտրոն էր, նա յուրացնում է նաև այստեղ գործածական ասորերենը և պարսկերենը, լրացնում իր կրթությունը ընթերցանությամբ, խորամուխ լինում երկրի ու պետության վիճակի ու գործերի մեջ։ Նա լինում է նաև զինվորական ծառայության մեջ։ Այնուհետև Մաշտոցը հոգևոր կոչում է ընդունում և

իր աշակերտների հետ անցնում Գողթան գավառը՝ քարոզչական գործունեության նպատակով։ Այսպիսով, Մաշտոցը խոր և լայն պատկերացում է կազմում հայ հասարակության բոլոր շերտերի վիճակի մասին և համակվում նրա հոգսերով։ Գողթան գավառի ժողովրդի մեջ տակավին խոր արմատներ ունեցող հեթանոսության հետ պայքարի պայմաններում, Մաշտոցը միտք է հղանում ստեղծել հայ դպրություն։

Վերադառնալով Վաղարշապատ, նա իր գաղափարի ջերմ պաշտպան է գտնում ի դեմս Սահակ Պարթև կաթողիկոսի։ Հայ դպրության ստեղծման ջատագով է դառնում նաև Վռամշապուհ հայոց թագավորը, որ հաջորդել էր Խոսրով IV-ին. նա իր բոլոր հնարավորությունները ի սպաս է դնում այդ գործի իրականացմանը։ Մտաբերելով իր երբեմնի լսածը ասորի ոմն Դանիել եպիսկոպոսի մոտ հայերենի նշանագրեր լինելու մասին, նա մարդ է ուղարկում դրանք բերելու։ Ստանալով նշանագրերը, Մաշտոցն ու Սահակը փորձում են դրանցով հայերեն գրել սովորեցնել մի խումբ աշակերտների, սակայն երկամյա այդ փորձը դրական արդյունք չի տալիս. միաժամանակ պարզվում է, որ «Դանիելյան նշանագրերը» անբավարար են հայոց լեզվի հնչյուններն արտահայտելու համար, և որ անհրաժեշտ է ավելի կատարյալ այբուբեն։

Մաշտոցը մի խումբ աշակերտների հետ մեկնում է Ասորիք, նպատակ ունենալով նրա հնամենի մշակութային կենտրոններում աշխատել նշանագրերի ստեղծման վրա։ Այստեղ նրան բարյացակամ ընդունելություն և օժանդակություն են ցույց տալիս։ Ու մինչդեռ նրա հետ եկած աշակերտները՝ երկու խմբի բաժանված, սովորում էին մեկը՝ հունական դպրություն Սամոսատ քաղաքում, մյուսը՝ ասորական՝ Եդեսիայում, ինքը Մաշտոցը այստեղ 406 թ. ձեռնամուխ է լինում իր առջև դրված խնդրի լուծմանը։

Հարմար ու գեղեցիկ նշանագրերի մշակման դժվարին գործին պետք է նախորդեր առավել դժվարագույնը՝ առաջին անգամ հայ ժողովրդի պատմության մեջ հնչյունաբանական վերլուծության ենթարկել հայոց լեզուն և կենդանի խոսքից անջատել-առանձնացնել լեզվին հատուկ հնչույթները։ Այս գործը Մաշտոցը կատարել է այնքան փայլուն, որ նրա ստեղծած նշանագրերը կատարելապես համապատասխանել են ժամանակի հայոց լեզվի հնչյունական համակարգին, իսկ մինչև մեր օրերը անցած 15 դարերի ընթացքում միմիայն այնպիսի փոփոխություններ են մտցվել նրանց մեջ, որոնք հայոց լեզվի հետագա զարգացման արդյունք են հանդիսացել։

Այնուհետև նա ձեռնարկել է տառաձևերի հորինմանը, և ստեղծելով նրանց ատաղձը, իրեն որպես խորհրդատու ընտրել սամոսատցի հույն գեղագիր Հոոփանոսին՝ տառերին վերջնական տեսք տալու համար։ Այսպես մշակվել են այն տառերը, որոնցով մինչև այժմ գրում ենք հայերեն։ Նորաստեղծ այբուբենի առաջին փորձարկումը Մաշտոցը ձեռնարկել է իր աշակերտներ Հովհան Եկեղեցացու և Հովսեփ Պաղնացու հետ, թարգմանելով մի հատված Աստվածաշնչից։

Ասորիքից իր աշակերտների հետ վերադարձող Մաշտոցին Վաղարշապատում ընդունում են ցնծությամբ։ Սկսվում է նորաստեղծ այբուբենի և գրավոր հայերենի երկրով մեկ տարածման ոգևորիչ և աշխատատար գործը՝ ամենուրեք դպրոցներ բացելու միջոցով։

Մաշտոցի աշակերտ ու կենսագիր Կորյունի հաղորդման համաձայն, իր ուսուցչի գործունեությունը դուրս է եկել Հայաստանի և հայոց լեզվի սահման-

ներից։ Կորյունը պատմում է, որ Մաշտոցը նշանագրեր է ստեղծել նաև աղվաներեն և վրացերեն լեզուների համար։ Նույնը հաստատում է Խորենացին։ Առկա է, ուրեմն, Անդրկովկասի ժողովուրդների պատմական բարեկամության ու համագործակցության փաստերից մեկը։

Մաշտոցի կյանքը և գործունեությունը իսկական սխրանք են։ Նա ոչ միայն նոր վեհ գաղափար է առաջ քաշել, այլև նվիրել է նրա իրագործմանը իր ողջ կյանքը, որն ավարտվեց 440 թ.։ Նույն թվականին մահացավ և Սահակ Պարթևը։

Գրերի գյուտը ամրակուռ պատվանդան ստեղծեց բազմաթիվ դարեր բանավոր զարգացում ապրած հայոց լեզվի նվաճումների հաստատման, նրա կայունացման ու հարատևման համար։ Նրա մոտակա ու հեռավոր, մշակութային ու քաղաքական հետևանքներն ու արդյունքները բազմաթիվ են և անգերագնահատելի։ Նրանից անմիջապես հետո ծայր առավ ու մի քանի տասնամյակների ընթացքում ծաղկուն վիճակի հասավ մեսրոպատառ հայ մատենագրությունը՝ իր երկու ճյուղերով՝ թարգմանական, որը դավանաբանական գրականության հետ մեկտեղ հայ ժողովրդին նվիրեց համաշխարհային մշակույթի բազմաթիվ արժեքներ՝ գիտական, փիլիսոփայական և գեղարվեստական գրականության բնագավառում, և ինքնուրույն, որը հենց իր ակունքում ծնեց պատմագրական երկերի մի հոյակապ շարան՝ Կորյունի, Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Եղիշեի, Ղազար Փարպեցու և, վերջապես, հայոց պատմահայր Մովսես Խորենացու երկերը, ինչպես և դավանաբանական-փիլիսոփայական ու գիտական գրականության բազմաթիվ նմուշներ՝ իրեն Մաշտոցի, Եզնիկ Կողբացու, Դավիթ Քերականի և այլոց գրչին պատկանող։ Սրանց մեջ, իրենց ծնած դարաշրջանի իրողություններից բացի, ամփոփվեցին նաև հայ հոգևոր մշակույթի տարբեր բնագավառների նախամաշտոցյան ու նախաքրիստոնեական շրջանի կուտակումները։

Մեսրոպատառ գրականությունը բեղմնավորեց և նյութական մշակույթը, որը ևս մտավ իր ծաղկման շրջանը։ Իսկ մշակույթը դարձավ այն հզոր ուժը, որի օգնությամբ ժողովուրդը կարողացավ դարերի ընթացքում պահպանել իր ինքնուրույնությունը։